ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 8 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԵՐԵՄՅԱՆ ԱՇՈՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՈԼՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

Հ ԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 10-ի
N 8-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու և 2020 թվականի ընթացքում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին:

   Զեկ.՝ Ք. Մելքոնյան

2. Տարածքների տրամադրման վարձավճարի չափ սահմանելու մասին

   Զեկ.՝ Գ.Սարիբեկյան

3. Խրախուսանք կիրառելու մասին

   Զեկ.՝ Վ.Մելքոնյան

4. Դրամական աջակցություն տրամադրելու մասին

   Զեկ.՝ Ռ.Աղեկյան

5. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

   Զեկ.՝ Հ.Միքաելյան

6. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

   Զեկ.՝ Հ.Միքաելյան

7. Գույքահարկի և հողի հարկի գծով հաշվարկված տույժերից ազատման մասին

   Զեկ.՝ Ք.Մելքոնյան

8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին:

   Զեկ.՝ Դ.Մինասյան

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՆԱ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և 2020 թվականի ընթացքում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԵՐԵՄՅԱՆ ԱՇՈՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՈԼՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

Հ ԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 10-ի
N 9-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1. Փարաքար համայնքի 2020թվականի ընթացքում հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը և 2019թվականի նկատմամբ համեմատական վերլուծությունը

2020 թվականի ընթացքում ընդամենը հավաքագրվել է 411 մլն 123.931 հազ.դրամ, որը կազմում է բյուջեի 107.7 %-ը, 2019 թվականի նույն ժամանակաշրջանում հավաքագրվել է 406 մլն 846.723 հազ.դրամ գումար, որը կազմում է բյուջեի 98.8 %-ը, կամ 2020թվականին ավել է հավաքագրվել 4 մլն 377.208 հազ.դրամ , տոկոսային հարաբերությամբ 8.9% -ով ավել :

2020թվականի ընդամենը զուտ եկամուտը հավաքագրվել է 240 մլն 907.616 հազ.դրամ, որը կազմում է զուտ եկամուտի 112.7 %-ը, իսկ 2019 թվականի նույն ժամանակաշրջանում զուտ եկամուտը հավաքագրվել է 224մլն 480.176 հազ.դրամ, որը կազմում է 98.8 %-ը, 2020թվականին ավել է հավաքագրվել 16 մլն 427.440 հազ.դրամով, տարեկան պլանի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ ավել է հավաքագրվել 13.9%-ով:

	2019թ.			2020թ.		
Եկամուտների անվանումը	Տարեկան պլան	Փաստացի կատար.	%	Տարեկան պլան	Փաստացի կատար.	%
1.Հարկային եկամուտներ	**104500,0**	**113745.784**	**108.8**	106500,00	111482.486	104.7
1.1 Հողի հարկ	13500,00	14087.429	104.35	13500,000	13440.21	99.6
1.2 Գույքահարկ շինություններից	51000,00	45220.808	89.2	51000,000	43131.23	84.6
1.3 Գույքահարկ փոխադրամիջոց.	40000,00	54437.547	136.09	42000,000	54911.05	130.7
2. Ընդամենը տեղական տուրք	**9973,70**	**9517.766**	95.4	**9880.0**	**12913.825**	**130.7**
Նոր կառուց. օբյեկ. շին.թույլտ.	470.00	1397.4	297.3	1000.0	2543.6	254.4
Օբյեկտների վերակառուցելու համար	20.00	44.8	224.0	40.00	18.0	45.0
Օբյեկտների քանդման համար	20.00	124.7	623.5	40.00	39.8	99.5
Հանր.սննդի և զվարճ օբյեկտ. Ժամը 24:00-ից հետո.աշխ.թ.	175.0	315.4	180.3	200.00	128.7	64.4
Բաղնիքներ և սաունաներ Ժամը 24:00-ից հետո.աշխ.թ.	200.0	199.9	99.95	200.0	105.0	52.5
Օդի և ծխածոտի վաճառք և հանրային սննդի կազմ.,իրաց.	**2500.0**	**2363.4**	**94.5**	**2700,000**	**3396.48**	**125.8**
ա/Հիմն.շ.ներս.օդու վճառքի թույլտ	900.0	1680.0	186.7	1000.00	1570.98	157.1
բ/ Հիմն.շ.ներս.հանր.սննդի կազ.	1000.0	1500.3	150.0	1000.00	850.6	85.1
գ/ Հիմն.շ.ներս.ծխախոտի վճառքի թույլտ	600,0	903.1	150.5	700.00	974.9	139.3
Բացօթյա վաճառք	**2200.0**	**2082.76**	**94.67**	**1700.0**	**1603.65**	**160.4**
ա/վառելիքաքսայուղերի վաճ.թույլ.	1200.0	1613.66	134.5	1200.0	1374.75	114.6
բ/այլ ապրանքի վաճառքի թույլտ.	1000.0	469.1	46.9	500.0	228.9	45.8
գ/Թանկարժեք մետաղներից պատ իրերի առ ու վաճ. Թույլտվ.	0.0	0.0	0.0	0.0	75.0	

Գովազդի տեղ. թույլտվություն	4300.0	5853.1	136.1	4,000.00	5003.6	125.1
Արխիվից տրվող փաստթղթեր	88.7	68.4	77.11	74.1	72.3	97.6
3.Պաշտոնական դրամաշնորհ.	**116541.3**	**116541.3**	**100**	**123658.93**	**123658.95**	**100**
3.1 Պետ. բյուջեից դոտացիա	105,417.30	105.417.3	100	105,417.30	105417.3	100
3.2Համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումար	155.4	155.4	100	7273.029	7273.029	100
3.3 Ազգ.նվագարանների գծով սուբվենցիա	10,968.60	10968.6	100	10,968.60	10968.6	100
4. Այլ եկամուտներ	**54073.7**	**55566.77**	**102.8**	**42961.071**	**54931.441**	**127.9**
Ինքնակամ շին. օրինականաց.	18000.0	24065.091	133.7	14124.0	31372.81	222.1
Տուգանք ինքնակամ շինութ.համ.	1400.0	3377.156	241.2	1550.0	6149.0	396.7
Աղբահանություն	12000.0	7828.247	65.24	12000,00	9131.044	76.09
Վարձ. հողի վճար	1300.0	779.377	60.0	1300.0	1541.887	118.6
Վարձ գույքի վճար	1300.0	779.377	60.0	602.971	497.0	82.4
Տեղական վճար	20260.0	17443.3	86.1	12884.10	5334.3	41.1
Հասցեի որոշման և բնութագրի տրամադրում	500,00	718.1	143.6	500,00	905.4	181.1
վ/բ ազատ մնացորդ	0.0	0.0	0.0	164.0	164.0	100
Ընդամենը վարչ. բյուջե	285000.0	299955.321	105.25	283000.0	302986.70	107.06
Հողի օտարումից մուտքեր	58784.253	41066.155	69.9	54479.134	61579.864	113.0
Պետական բյուջեյից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար նպատակային հատկացումներհամար	44010.0	41809.5	95.0		2200.5	
Այլ հիմնական միջ.իրացումից	0,000	0.0	0.0	0,000	0.0	0.0
ֆ/բ ազատ մնացորդ	24015.747	24015.747	100.0	44356.866	44356.866	100.0
Ընդամենը ֆոնդ. բյուջե	126810.000	106891.402	84.3	98836.0	108137.230	109.0
Ընդամենը	411810.000	406846.723	98.79	381836.0	411123.931	107.67
Զուտ եկամուտ առանց գրաբեսկգբի ազատ մնացորդի	227242.953	224480.176	98.8	213820.205	240907.616	112.67

2. Փարաքար համայնքի 2020թվականի ընթացքում ծախսերի կատարման հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման և 2019 թվականի նկատմամբ համեմատական վերլուծությունը

2020 թվականի ընթացքում ընդամենը կատարվել է ծախսեր 299 մլն 316.314 հազ.դրամի, որը կազմում է բյուջեի 78.4 %-ը: 2019 թվականի նույն ժամանակաշրջանում կատարվել է ծախսեր 362մլն. 325.857 հազ.դրամի, որը կազմում է բյուջեի 88.0 %-ը: 2020թվականին ծախսերը պակաս են կատարվել 63մլն. 009.543 հազ. դրամով , որը պայմանավորված է համավարակի պատճառով աշխատանքային ոչ լրիվ գործընթացով:

N		Ծախսերի անվանումը	2019թ			2020թ		
խումբ	ենթախումբ		Տարեկան սահմ.	Փաստացի կատար.	%	Տարեկան սահմ.	Փաստացի կատար.	%
			հազ.դրամ	հազ.դրամ		հազ.դրամ	հազ.դրամ	
	I	**Վարչական բյուջեի ընդամենը**	**285000.0**	**273692.374**	**96.0**	**283164.0**	**244655.683**	**86.4**
1		Տեղական ինքնակառավարում	56686.3	53922.808	**95.1**	61470.0	58004.729	**94.4**

		Համայնքային այլ ծառայություններ	7390.1	3883.750	**52.6**	9424.529	3780.329	**40.1**
		Կրթություն և գիտություն	117868.6	117134.910	**99.4**	110400.0	98634.3	**98.2**
		Սոցիալական ապահովություն	5000.0	4965.0	**99.3**	6000.0	3945.2	**65.8**
6		Մշակույթ, սպորտ և կրոն	18200.0	18200.0	**100.0**	19000.0	19000.0	**100.0**
7		Բնակկոմունալ տնտեսություն	55037.5	52585.906	**95.5**	79313.339	57614.993	**72.6**
	7.1	Սան մաքրում	32843.5	32013.906	**97.5**	30096.599	30096.599	**100.0**
	7.2	Կեղտաջրերի հեռացում	1910.0	1288.0	**97.5**	1565.471	1565.0	**100.0**
	7.3	Արտաքին լուսավորություն	1000.0	0.0	**0.0**	2000.0	0.0	**0**
	7.4	Այլ ծախսեր	19284.0	19284.0	**100**	45651.269	53874.000	118.0
8		Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումներից մուտքեր				0.0	0.0	**0**
9		Գյուղատնտեսություն				3676.132	3676.132	**100.0**
		Պահուստային ֆոնդ	0.0	0,0	**0.0**	0.0	0,0	0
II		**Ֆոնդային բյուջե**	**149810.000**	**111633.449**	**74.5**	**98836.0**	**54660.631**	**55.3**
	1	Շենքերի և շինությունների շինարարություն	137060.0	103783.7	**75.7**	37890.0	31846.111	84.0
	2	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	7610.0	4603.949	**60.5**	45203.1	21043.3	46.6
	3	Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր	2500.0	1605.8	**64.2**	2000.0	1471.220	73.6
	4	Տրանսպորտային սարքավորումներ	0	0	**0**	0	0	0
	5	Նախագծահետազոտական ծախսեր	2640.0	1640.0	**62.1**	3000.0	300.0	10
I+II		**Ընդամենը ծախսեր**	**411810.000**	**362325.857**	**88.0**	**382000.000**	**299316.314**	**78.4**

Փարաքար համայնքի 2020թվականի ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը

ա/ Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման համար 2020 թվականի ընթացքում կատարվել են ծախսեր 59 մլն 002.088 հազ.դրամ, որից աշխատավարձ՝ 53մլն 831.902 հազ. դրամ, վճարվել է այլ վարձատրություններ հոդվածով աշխատավարձ 1075.320 հազ դրամ՝ անասնաբուժահակահամաճարակային միջոցառումների կանխման համար: Կատարվել է էներգետիկ, կոմունալ և կապի ծառայությունների դիմաց ծախսեր 885.643 հազ.դրամի, կատարվել է ապահովագրական ծախսեր՝ 67.0հազ դրամ շտապ օգնության և 47.0 հազ դրամ KIA ծառայողական մեքենաների ապահովագրությունների համար: Վարչական ծառայություններ հոդվածով կատարվել է ծախս 2.570 հազ դրամ, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների դիմաց ծախսեր 455.0 հազ. դրամ, աշխատակազմի մասնագիտական զարգացման և վերապատրաստման համար ծախս 76.0 հազ դրամի: Մասնագիտական ծառայությունների գծով կատարվել է ծախս 25.184 հազ դրամ՝ /parakar.am/ կայքի պահպանման, դոմեյնի հաշվեգրման և գազասպասարկման համակարգերի տեխնիկական սպասարկումների համար: Համայնքապետարանի համակարգիչների և պատճենահանման սարքերի քարթրիջների լիցքավորման և վերանորոգման համար կատարվել է ծախս 172.5 հազ.դրամ: Ձեռք է բերվել գրենական պիտույքներ 289.640 հազ.դրամի: Ձեռք է բերվել ծառայողական ավտոմեքենայի համար բենզին 844.300 հազ.դրամ: Կենցաղային մաքրիչ նյութեր ձեռք բերելու համար կատարվել է ծախս 56.150 հազ դրամ: Հատուկ նպատակային նյութեր հոդվածով կատարվել է ծախս 96.720հազ դրամի քլորակիր և քլորամին ձեռք բերելու համար: Փոխանցվել է պետական տուրք 126.800 հազ.դրամի: Համակարգիչ ձեռք բերելու համար վարչական սարքավորումներ հոդվածով կատարվել է ծախս 997.360 հազ դրամ:

բ/ Ընդհանուր հանրային բնույթի ծառայությունների գծով կատարվել է ծախսեր 4մլն 254.189 հազ.դրամ, ձեռք է բերվել նվերներ 351.600 հազ. դրամ, որից 114.0 հազ դրամ համայնքի 5

ապսակ զույգերի համար «Տեարն-ընդառաջ» տոնի կապակցությամբ և 237.600 հազ. դրամ համայնքի 1-ին դասարան հաճախող երեխաներին գրենական պիտույքների հավաքածուներ թվով 110 հատ: Փոխանցվել է 120 հազ. դրամ ՀԾ-Հաշվապահ 7 հաշվապահական ծրագրի անհատական ուսուցման համար: Նորայր և Ընկերներ ՍՊԸ-ին փոխանցվել է Փարաքար համայնքի Վ.Մամիկոնյան փողոցից Արարատյան փողոցն ընկած հատվածի 1400գծ, կոյուղագծի կառուցման և գոյություն ունեցող կեխտաջրերի մաքրման կայանի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության համար 744.350 հազ. դրամ : Ձեռք է բերվել Արցախյան պատերազմում զոհված թվով 8 նահատակների հուղարկավորությունը կազմակերպելու համար ծաղկեպսակներ 220.0հազ դրամի, ախտահանիչ նյութեր 143.659 հազ. դրամ , կատարվել է ծախսեր համայնքում կորոնավիրուսի հետևանքով մեկուսացված թվթվ 74 անձանց 400.6 հազ. դրամի սննդամթերք և տնտեսական ապրանքներ , փոխանցվել է Փարաքարի բուժամբուլատորիային՝ շտապ օգնության վարորդի աշխատավարձ և դիզ.վառելիքի ծախս 1 մլն. 700.0 հազ.դրամ, փոխանցվել է Համայնքների միությանը, որպես անդամավճար 100.120 հազ. դրամ: Ձեռք է բերվել երկու բժշկական ջերմաչափ 49.700 հազ. դրամի , 350.0 հազ. դրամի օդորակիչներ և 74.160 հազ. դրամի համակարգչային հավաքածու:

գ/ Սոց օգնությունների գծով կատարվել է ծախսեր 3մլն. 945.2 հազ.դրամի: 2մլն.850.0 հազ դրամ փոխանցվել է դժբախտության մեջ հայտնված 57 ընտանիքի, 920,0 հազ.դրամ փոխանցվել է 34 անապահով ընտանիքի , 150.0հազ դրամ չորրորդ երեխան ծնված մեկ ընտանիքի և 25,2 հազ. դրամը դրամական օգնություն ավտոդպրոց հաճախող Հենրիկ Տերտերյանին, որպես ճանապարհածախս:

դ/ Գյուղատնտեսության գծով , ոռոգում նախահաշվով կատարվել է ծախս ՝ 3676.132 հազ. դրամ, որը կազմում է Հայաստանի Տարածքային Զարգացման ՀԻմնադրամի ջրային տնտեսության ծրագրի իրականացման համար համայնքում ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման համար շինարարական աշխատանքների համաֆինանսավորման 10%-ը:

ե / «Բարեկարգում» տնօրինության միջոցով կատարված ծախսը կազմում է 110լն 804.404 հազ դրամ, որից աշխատավարձ՝ 27 մլն 098.514 հազ.դրամ, Կատարվել է խմելու ջրի ծախս 481.124 հազ.դրամ: Համայնքի աղբահանությունն իրականացնելու համար փոխանցվել է 24մլն 884.998 հազ. դրամ: Փոխանցվել է նախորդ տարվա պարտք՝ աղբատար մեքենաների ծախսած բնական սեղմված գազի համար 163.745 հազ դրամ: Ձեռք է բերվել գրասենյակային ապրանքներ 23.250 հազ. դրամ : Ձեռք է բերվել տրանսպորտային նյութեր 941.246 հազ.դրամի: Հատուկ նպատակային նյութեր հոդվածով կատարվել է ծախս 2մլն 467.860 հազ դրամի՝ Թաիրովի թվով 9 բնակիչների դիմումի համաձայն ձեռք է բերվել 1մլն. 749.660 հազ.դրամի 964ք.մ պրոֆնաստիլ ցինկապատ ծածկաթիթեղ և բաշխվել: Հ.Աբրահամյան փողոցի գետնանցումի գիշերային լուսավորության համար ձեռք է բերվել 2 ԼԵԴ լուսատու, 1 ֆոտոռելե և 39մետր մալուխ: Փարաքարի մշակույթի տան և համայնքապետարանի շենքի գիշերային լուսավորությունը կարգավորելու համար ձեռք է բերվել 2 ֆոտոռելե: Վահրամ Փափազյան փողոցի գիշերային լուսավորության համար ձեռք է բերվել 300մ մալուխ 1 ֆոտոռելե և 2 էկոնոմ լամպ: Նաիրի փողոցի՝ Մարտի 8-ի փողոցից մինչև Ս.Հարություն փողոցն ընկած հատվածը լուսավորելու համար ձեռք է բերվել 120մ ալյումինե մալուխ, 3 էկոնոմ լամպ և 3 կոթառի պերեխադնիկ: Ձեռք է բերվել 28 հատ էկոնոմ լամպ, որը փոխարինվել է համայինքի փողոցներում տեղակայված էլեկտրահենասյուների վառված լամպերով: Համայնքապետարանի և մշակույթի տան հարակից այգին ջրելու և մշակելու համար ձեռք է բերվել խոտհնձիչի 1 դիսկ, գազոնի մկրատ և այլ անհրաժեշտ պարագաներ: Թաիրովի 1-ին շենքի շքամուտքի վերանորոգման համար ձեռք է բերվել անհրաժեշտ շինարարական նյութեր, որի համար կատարվել է ծախս 64.650 հազ դրամ: Փարաքար Նաիրի 1փկղ և Նաիրի փողոցների խաչմերուկներում կառուցվել է անձրևաջրերի հեռացման համակարգ: Կատարվել է կոյուղագծերի խցաբացման աշխատանքներ՝ Խորհուրդների, Նաիրի ,Էրեբունի, Սիամանթո, Սևանի փողոցների, Թաիրովի մանկապարտեզի շենքի, Թաիրովի 5-րդ շենքի, Մայիսյան փողոցի, Թաիրովի 2-րդ շենքի հարակից հատվածի , Բարեկամության փողոցի , Նաիրի 2-րդ նրբանցքի , Ս.Հարության փողոցի , Երևանյան փողոցի 2-րդ նրբանցքի և Թաիրովի 1-ին շենքի հարակից տարածքի , Այգեստան փողոցի , , ոռոնց համար փոխանցվել է 1մլն 565.0 հազ.դրամ: Փոխանցվել է էլեկտրոնային ստորագրության երկարացման համար 3.0 հազ դրամ: Փոխանցվել է կեղտաջրերի մաքրման կայանի նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար 300.0 հազ դրամ, և ձեռք է բերվել 62.350 հազ. դրամի սինթետիկ յուղ կեղտաջրերի մաքրման կայանի պոմպի օդամղիչների փորձարկման համար :

Փոխանցվել է նախորդ տարվա ընթացքում սուբվենցիոն ծրագրի ՝ Նաիրի փողոցի ասֆալտապատման աշխատանքների 5% -ը 4 մլն. 890.0 հազար դրամ:

ահիրի փողոցում արևային էներգիայով աշխատող գիշերային լուսավորության իրականացման համար թվով 32 հենասյուների վրա կատարվել է ԼԵԴ լուսատուների մոնտաժում և տեղադրում, որի համար ծախսվել է 1մլն. 699.896 հազ. դրամ:

Փոխանցվել է Փարաքար համայնքի Վ.Մամիկոնյան փողոցից Արարատյան փողոցն ընկած հատվածի 1400գծ, կոյուղագծի կառուցման աշխատանքների սուբվենցիոն ծրագրի 56 մլն 124.922 հազ. դրամի 45% -ը՝ 25մլն. 256.215 հազ. դրամ ԲԻԴԵՔ ՍՊԸ-ին և գոյություն ունեցող կեխտաջրերի մաքրման կայանի վերանորոգման աշխատանքների սուբվենցիոն ծրագրի 66 մլն.896.940 հազ. դրամի 45%-ից 21մլն 043.300 հազ. դրամը ԱՐՏԵՋԻԱ ՍՊԸ-ին :

զ/ Փոխանցվել է սուբսիդիա՝ Փարաքարի «Մշակույթ և սպորտ»ՀՈԱԿ-ին 19 մլն. դրամ, «Փարաքարի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին 52մլն.800.0 հազ. դրամ, «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին՝ 34մլն 865.700 հազ. դրամ և ազգային նվագարանների անվճար ուսուցման համար հատկացվել է ընթացիկ դրամաշնորներ 10 մլն 968.6 հազ. դրամ:

Աշխատակազմի քարտուղաի ժ/պ՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 10-Ա

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող մշակույթի տների շենքերի տարածքներում մարզամշակութային խմբակների գործունեության նպատակով տարածքներ տրամադրելու համար սահմանել վարձավճար՝ համապատասխան խմբակում ընդգրկված յուրաքանչյուր անձից գանձված վճարի 15 %-ի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ 1

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԵՐԵՄՅԱՆ ԱՇՈՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՈԼՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

Հ ԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**